

**«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ  
ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվա հասարակագիտական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա օրենքով սահմանված կարգով միավորվել են ֆիզիկական անձինք՝ իրենց ոչ կրոնական, ոչ հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու նպատակներով:

1.2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենսդրության, այլ նորմատիվ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:

1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5. Կազմակերպության պաշտոնական լեզուն հայերենն է: Տարբեր լեզուներով գրված տեքստերի մեկնաբանությունից ծագած որևէ անհամապատասխանության դեպքում՝ հայերեն գրված տեքստը համարվում է որոշիչ:

1.6. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝  
«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական  
համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական  
կազմակերպություն.

Կազմակերպության անգլերեն լրիվ անվանումն է՝  
“Graduates Association of the Yerevan Brusov State University of languages  
and social sciences” non-governmental organization.

Կազմակերպության ռուսերեն լրիվ անվանումն է՝  
Общественная организация "Объединение выпускников Ереванского  
государственного университета языков и социальных наук имени В. Я. Брюсова".

1.7. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ քաղաք Երևան, Հ.  
Թումանյանի 42:

## **2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

2.1. Կազմակերպության գործունեության նպատակները և խնդիրներն են՝  
օրենքով սահմանված կարգով՝

ա/ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական  
համալսարանի և շրջանավարտների միջև ստեղծել փոխշահավետ կապեր և  
նպաստել դրանց ամրապնդմանը,

բ/ նպաստել Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվահասարակագիտական համալսարանում կրթական և գիտական ծրագրերի  
իրականացմանը,

գ/ նպաստել գիտաժողովների կազմակերպմանը, գիտական  
աշխատանքների և դասագրքերի հրատարակմանը,

դ/ նպաստել և աջակցել միավորման ամդամներին և նրանց ընտանիքների  
սոցիալական վիճակի բարելավմանը,

ե/ անհրաժեշտ բարոյական և նյութական պայմաններ ստեղծել  
համալսարանի գիտամանկավարժական ներուժի լիարժեք գործունեության  
համար,

զ/ կազմակերպել դասընթացներ, դասախոսություններ, կլոր սեղաններ, մասնակցել մրցույթներին, դրամաշնորհային ծրագրերին և այլ նմանատիպ գործողություններին, որոնք հուզում են կազմակերպության անդամներին,

է/ կազմակերպել միավորման անդամների մասնագիտական վերապատրաստման դասընթացներ Հայաստանում և արտերկրի ուսումնագիտական կենտրոններում, մասնակցել միջազգային, երիտասարդական և կրթական ծրագրերին,

ը/ աջակցել շրջանավարտ-համալսարան կապի վերահաստատմանը,

թ/ իրականացնել տեղեկատվության և փորձի փոխանակում ՀՀ և արտերկրի նմանատիպ գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ,

ժ/ վերոշարադրյալ նպատակների համար օրենքով սահմանված կարգով ստեղծել համապատասխան հիմնադրամներ, տնտեսական ընկերությունների միջոցով ծավալել ձեռնարկատիրական, հրատարակչական և օրենքով չարգելվող այլ գործունեություն,

ի/ քաջալերել շնորհալի ուսանողներին և երիտասարդ մասնագետներին՝ սահմանելով կրթաթոշակներ և խրախուսման պարգևներ,

լ/ կնքել հուշագրեր և համաձայնագրեր տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ ելնելով կազմակերպության նպատակներից և խնդիրներից:

խ/ խթանել քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, ազատ խոսքի տարածմանը և ժողովրդավարության զարգացմանը:

2.2. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, ՀՀ-ում գրանցված այլ կազմակերպությունների և անհատ անձանց հետ:

### **3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ**

3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի, որը

ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը:

3.2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին (այսուհետև՝ խորհուրդ) կամ առանձնացված ստորաբաժանման ղեկավարությանը:

Մինչև տասնչորս տարեկան անչափահասը կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

3.3. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է խորհուրդը, հերթական խորհրդի նիստի ընթացքում կանոնադրությամբ սահմանված կարգով գործադիր տնօրենի ներկայացմամբ: Կես տարին մեկ անգամ գործադիր տնօրենը տեղեկատվություն է տալիս խորհրդին՝ անդամների կազմի և քանակի վերաբերյալ, եթե դրանք փոփոխվել են:

3.4. Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից զրկումը տեղի է ունենում խորհրդի որոշմամբ:

3.5. Կազմակերպության այն անդամը, ով վեց ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար, խորհրդի որոշմամբ զրկվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

#### **4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝  
ա/ ընտրել և ընտրվել Կազմակերպության բարձրագույն և այլ մարմիններում, ընդ որում, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում կարող է ընտրվել 18 տարին լրացած անձը,

բ/ Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ,

գ/ սպառիչ տեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին,

դ/ ազատ դուրս գալ Կազմակերպությունից,

ե/ Կազմակերպությունից ստանալ իրավական օգնություն՝ ուղղված իր օրինական շահերի պաշտպանությանը,

զ/ մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին,

է/ Կազմակերպության նախագահի և խորհրդի ոչ կանոնադրական գործունեության դեմ բողոքարկել ընդհանուր ժողովին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա/ հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին,

բ/ կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,

գ/ մուծել ամսական անդամավճար՝ խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է խորհուրդը,

դ/ բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները:

4.3. Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, Կազմակերպության անդամությունից զրկում:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1. Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

5.2. Կազմակերպությունն ունի հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով կլոր կնիք, առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով, իր

անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում: Կազմակերպությունը կարող է ունենալ խորհրդանիշ:

5.3. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպչական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

5.4. Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

ա/ տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,

բ/ հիմնադրել լրատվության միջոցներ,

գ/ կազմակերպել և անցկացնել հավաքներ.

դ/ ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

ե/ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով,

զ/ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել և օգտագործել անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք,

է/ օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման հանձնել Կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք,

ը/ կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ,

թ/ ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով, մասնակցել և իրականացնել երիտասարդական, կրթական և այլ ծրագրեր,

ժ/ իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին, իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ, ստեղծել

առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

## **6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

6.1. Կազմակերպությունը պարտավոր է՝

ա/ ցանկացած ֆիզիկական անձի պահանջով յոթ օրացուցային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը,

բ/ օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,

գ/ իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ընդհանուր ժողովի հաստատմանը երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը,

դ/ պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով նրան տրամադրել իր բարձրագույն և այլ մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմինների ներկայացուցիչներին ներկա գտնվել Կազմակերպության ընդհանուր ժողովին,

ե/ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ,

զ/ առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին, սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար,

է/ վարել իր անդամների հաշվառումը,

ը/ առանց լիազորագրի Կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացուցային օրվա ընթացքում, պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) Կազմակերպության գտնվելու նոր վայրի հասցեի մասին տվյալները:

## 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ընդհանուր (այսուհետ ժողով) ժողովին:

7.2 Ընդհանուր ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ: Ընդհանուր ժողովի հրավիրման կարգը սահմանվում է կանոնադրությամբ, դրա անցկացման կարգն ու ժամկետները որոշում է խորհուրդը: Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա խորհրդի կողմից սահմանված կարգով ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

7.3 Կազմակերպության արտահերթ ժողով հրավիրվում է Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ վերահսկիչ հանձնաժողովի պատճառաբանված պահանջով՝ խորհրդի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամից ոչ պակաս, կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կարգով՝ դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

Կազմակերպության ժողովի օրակարգի, նրա աշխատանքն սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով ոչ ուշ, քան ժողովի անցկացման օրվանից 14 օր առաջ:

Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում, հրավիրվում և տեղի է ունենում կազմակերպության արտահերթ ժողով, որի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն հերթական ժողովի հրավիրման համար նախատեսված եղանակով:

Եթե կանոնադրությամբ սահմանված է, որ կազմակերպության ժողովին մասնակցում են կազմակերպության անդամների պատվիրակները, և սույն կետում նշված ժամկետում հնարավոր չէ նոր պատվիրակներ ընտրել, ապա արտահերթ ժողովի են հրավիրվում կազմակերպության նախորդ ժողովին մասնակցելու համար ընտրված պատվիրակները:



7.4 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա/ կազմակերպության կանոնադրության հաստատումը (եթե այն չի հաստատել հիմնադիրների ժողովը), նրանում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը կամ նոր կանոնադրության հաստատումը.

բ/ կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը.

գ/ բացառապես կազմակերպության բարձրագույն մարմինն ենթակա և հաշվետու մարմինների (եթե կազմակերպությունը, բացի բարձրագույն մարմնից, ունի այլ մարմիններ), այդ թվում՝ կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ընտրությունը, այդ մարմինների կազմի փոփոխումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ընդ որում, նրանց լիազորությունների ժամկետները չեն կարող սահմանվել ավելին, քան կազմակերպության հերթական ժողովի հրավիրման՝ կանոնադրությամբ սահմանված պարբերականությունն է.

դ/ կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից.

ե/ կազմակերպության լուծարման մասին որոշման ընդունումը, բացի դատարանի վճռով լուծարումից.

զ/ այլ հարցերի լուծումը, եթե կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված է դրանց լուծումը բացառապես բարձրագույն մարմնի կողմից:

Կազմակերպության բարձրագույն մարմինը չի կարող իր բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը փոխանցել կազմակերպության այլ մարմնի:

7.5 Ընդհանուր ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են կազմակերպության բոլոր անդամների կամ ընտրված բոլոր պատվիրակների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների թվի կեսից ավելին: Կազմակերպության գործունեության կամ կազմակերպության ժողովի ընթացքում օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ չկանոնակարգված իրադրություն առաջանալու դեպքում հարցերը լուծվում են բարձրագույն մարմնի որոշմամբ: Կազմակերպության ժողովի ընթացքի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են 3 տարի ժամանակով:

7.6 Խորհուրդը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից երկու տարի ժամանակով: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության նախագահի կամ նրա հավանությամբ գործադիր տնօրենի կողմից ոչ ուշ քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի կամ խորհրդի երկու անդամների պահանջով:

#### 7.7 Խորհուրդը՝

ա/ հաստատում է Կազմակերպության նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ ժողովին ներկայացվող հաշվետվությունը,

բ/ առաջարկություններ է ներկայացնում ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,

գ/ ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում կամ զրկում անդամությունից,

դ/ Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ,

ե/ ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում,

զ/ սահմանում է Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը,

է/ ստեղծում և լուծարում է Կազմակերպության հիմնարկները, կառուցվածքային ստորաբաժանումները, առանձնացված ստորաբաժանումները /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/, տնտեսական ընկերությունները, ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները,

ը/ իրավունք ունի քննարկել և լուծել Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածներից, այդ թվում նաև կազմակերպության անդամակցության հարցը ոչ առևտրային իրավաբանական անձանց միություններին և միջազգային կազմակերպություններին:

7.8 Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների երկու երրորդից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

7.9 Կազմակերպության նախագահին ընտրվում է ժողովի կողմից 2 տարի ժամանակով:

7.10 Կազմակերպության նախագահը, որը միաժամանակ խորհրդի նախագահն է՝

- ղեկավարում է խորհրդի աշխատանքները և վարում է խորհրդի և ժողովի նիստերը,
- առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից,
- ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի,
- արձակում է հրամաններ, տալիս է լիազորագրեր,
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության ցանկացած չափի և կազմի գույքը,
- հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը,
- հաստատում է աշխատողների վարձատրության կարգն ու չափերը,
- հաստատում է Կազմակերպության հաշվապահական հաշվառման հաշվետվությունները,
- անհրաժեշտության դեպքում, աշխատանքների ծավալից ելնելով, կարող է նշանակել գործադիր տնօրեն, որի հետ նախագահը կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան տալիս, սույն կանոնադրությամբ սահմանված լիազորություններից բացի, լրացուցիչ լիազորություններ:

7.11 Կազմակերպության գործադիր տնօրենը նշանակվում է երկու տարի ժամանակով:

7.12 Կազմակերպության գործադիր տնօրենը՝

- սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով իրեն տրված լիազորությունների սահմաններում կազմակերպում և իրականացնում է կազմակերպության գործունեությունը,
- օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ,
- նախագահի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի հաստիքացուցակը,
- իր գործունեության մասին պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում կազմակերպության նախագահին, նրա կողմից

սահմանված կարգով և ժամկետներում, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է խորհրդի նիստերին,

- Կազմակերպության նախագահի հետ խորհրդակցելով՝ հրավիրել խորհրդի նիստ:

7.13 Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը (վերահսկիչը) ընտրվում է ժողովի կողմից 2 տարի ժամանակով: Խորհրդի անդամները և Կազմակերպության նախագահը չեն կարող լինել Վերահսկիչ հանձնաժողովի անդամներ:

7.14 Վերահսկիչ հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն երկու անգամ: Նիստ կարող է հրավիրել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, հանձնաժողովի անդամների մեկ երրորդի, Կազմակերպության նախագահի կամ խորհրդի պահանջով:

7.15 Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե վերահսկող մարմինը վերահսկիչն է, ապա նա որոշումներ է ընդունում միանձնյա:

7.16 Վերահսկիչ հանձնաժողովը կարող է Կազմակերպության նախագահից և այլ աշխատողներից պահանջել Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած տվյալներ և հաշվետվություն:

7.17 Վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Համագումարին՝ Կազմակերպության գործունեության, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների ստուգման արդյունքների մասին:

## **8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

8.1 Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

8.2 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

8.3 Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

- կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,
- բանկային հիմնարկներից ստացված վարկերը,
- դրամաշնորհները,
- բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,
- կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

8.4 Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

8.5 Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

8.6 Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

## **9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

9.1 Կազմակերպությունը կարող է լուծարվել ընդհանուր ժողովի կամ դատարանի որոշմամբ:

Ընդհանուր ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

9.2 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել ընդհանուր ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: